ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների և կենցաղային սառնարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը (փոփոխված) eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (06.12.2021թ.)՝ ժամը 15:00-ն.
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 07.12.2021թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ.

- 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով գնման հայտով սահմանված է ընթացակարգը կազմակերպելու տարվան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված մեկ միավոր գները.

- 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, գնման հայտով սահմանված է, որ ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր(ներ) (գործարք) առկա չէ.

Չափաբաժնի համարը	**Չափաբաժնի անվանումը**	**Նմանատիպ ապրանքի մեկ միավորի ձեռքբերման գինը /ՀՀ դրամ/**	**Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/**
1	Օդորակիչ 9000 BTU	210000	6300000
3	Օդորակիչ 18000 BTU	297960	5959200

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Մասնակցի գործունեության հասցեն**
«Էդ-Սպո» ՍՊԸ	ք. Երևան, Լենինգրադյան 23/1
Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ	Արարատի մարզ գ. Սուրենավան Արցախի 15 տ
Տեխնոթերմ ՍՊԸ	ք. Երևան, Գր. Լուսավորիչ 3 շ., 81 շին.
Միքայել Երանոսյան Վարդանի	Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս Ռոմանի 5
Ստեպ Լոջիկ ՍՊԸ	Երևան, Արգիշտի 7
ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	ք. Երևան, Գ. Նժդեհի 21

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Էդ-Սպո» ՍՊԸ	5000000	20%	6000000	5000000	20%	6000000	
1	Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ	6125000	20%	7350000	6125000	20%	7350000	Մերժված
1	Տեխնոթերմ ՍՊԸ	6150000	20%	7380000	6150000	20%	7380000	Մերժված
1	Միքայել Երանոսյան Վարդանի	7016375	20%	8419650	7016375	20%	8419650	Մերժված
1	Ստեպ Լոջիկ ՍՊԸ	7700000	20%	9240000	7700000	20%	9240000	Մերժված
2	«Էդ-Սպո» ՍՊԸ	7000000	20%	8400000	7000000	20%	8400000	
2	Տեխնոթերմ ՍՊԸ	8516800	20%	10220160	8516800	20%	10220160	
2	Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ	8800000	20%	10560000	8800000	20%	10560000	
2	Ստեպ Լոջիկ ՍՊԸ	11420000	20%	13704000	11420000	20%	13704000	
3	«Էդ-Սպո» ՍՊԸ	5660000	20%	6792000	5000000	20%	6000000	Մերժված
3	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	6083333.34	20%	7300000	5086000	20%	6103200	Մերժված
3	Տեխնոթերմ ՍՊԸ	5783400	20%	6940080	5783400	20%	6940080	Մերժված
3	Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ	6400000	20%	7680000	6400000	20%	7680000	Մերժված
3	Ստեպ Լոջիկ ՍՊԸ	14980000	20%	17976000	14980000	20%	17976000	Մերժված
4	«Էդ-Սպո» ՍՊԸ	3660000	20%	4392000	3241000	20%	3889200	
4	Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ	3700000	20%	4440000	3278400	20%	3934080	
4	Տեխնոթերմ ՍՊԸ	3925000	20%	4710000	3925000	20%	4710000	
4	Միքայել Երանոսյան Վարդանի	4791167	20%	5749400.4	4791167	20%	5749400.4	
4	Ստեպ Լոջիկ ՍՊԸ	9030000	20%	10836000	9030000	20%	10836000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 07.12.2021թ.՝ ժամը 15:32-ին և 1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների մասով «Էդ-Սպո» ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Էդ-Սպո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Էդ-Սպո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• «1.1. Կազմակերպության տվյալները» ենթաբաժնի «1.1.2. Անվանումը լատինատառ» դաշտում նշված չէ կազմակերպության լատինատառ անվանումը, այլ նշված է կազմակերպության անվանումը ռուսերեն լեզվով.

• հայտով ներկայացված լիազորագրի համաձայն՝ լիազորված անձ է հանդիսանում Սուրեն Անդրանիկի Բաղդասարյանը, այն դեպքում, երբ հայտարարագրի «1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնի «1.2.1. Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը» դաշտում լիազորված անձի անունը նշված է «Աուրեն».

• «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը» դաշտում նշված է «7», այն դեպքում, երբ հայտարարագիրը 8 էջ է.

• «4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնի «4.1.3. Անունը (լատինատառ)» դաշտում նշված տեղեկատվությունը ճշգրտման կարիք ունի.

• «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա» կետում որևէ նշում կատարված չէ.

• լրացված չեն հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին», «4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը» դաշտերը, ինչպես նաև «4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնի «4.8.1. Էլ. փոստի հասցեն» և «4.8.2. Հեռախոսահամարը» դաշտերը.

- 1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2021թ. դեկտեմբերի 10-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **դեկտեմբերի 09-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝

_____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիթյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների և կենցաղային սառնարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Էդ-Սպո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

«Էդ-Սպո» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

«Էդ-Սպո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, մերժված հայտերի և ընթացակարգը 3-րդ, 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների մասով «Էդ-Սպո» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Տեխնոթերմ ՍՊԸ-ի, Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի, Ստեպ Լոջիկ ՍՊԸ-ի հայտերը մերժել.
- 4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի, Տեխնոթերմ ՍՊԸ-ի, Միքայել Երանոսյան Վարդանի, Ստեպ Լոջիկ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին չափաբաժնի մասով՝ Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի, Տեխնոթերմ ՍՊԸ-ի, Միքայել Երանոսյան Վարդանի, Ստեպ Լոջիկ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի մասով՝ «Էդ-Սպո» ՍՊԸ-ի, ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, Տեխնոթերմ ՍՊԸ-ի, Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի, Ստեպ Լոջիկ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված, իսկ 5-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա.

- գնման ընթացակարգը 5-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝ _____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան